ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԵՎ

ՀայաստանիՀանրապետությանպաշտպանության նախարարությունը, այսուհետ՝ Նախարարություն,ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանի և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի,այսուհետ՝ Ինստիտուտ, ի դեմս ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյանի, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով զարգացնել համագործակցությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում,

կարևորելով սպորտի զարգացումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում որպես մարտունակության բարձրացման կարևորագույն միջոց,

վստահություն հայտնելով, որ համագործակցությունը կնպաստի մարզական-սպորտայինև գիտական փորձի փոխանակմանն ու աջակցության ցուցաբերմանը,

համաձայնեցին հետևյալիմասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը պայմանավորվում ենհամագործակցելՀուշագրով նախատեսվածուղղությամբ՝ իրենցհնարավորությունների և միջոցներիկիրառմամբ:

ՀՈԴՎԱԾ 2

ՍույնՀուշագրով նախատեսված համագործակցությանշրջանակներումԿողմերն իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ պատրաստակամություն են հայտնում կազմակերպելու և իրականացնելու ֆիզիկական պատրաստվածության դասընթացներ՝ համաձայն Կողմերի միջև հետագայում հաստատվող դասընթացի պլանի և ժամանակացույցի, ուսումնակրթական միջոցառումներ և համատեղ հետազոտություններ, գիտական կոնֆերանսներ, սեմինարներ և խորհրդակցություններ:

ՀՈԴՎԱԾ 3

Զինված ուժերում սպորտի և ֆիզիկական պատրաստվածության զարգացման նպատակով Ինստիտուտը կաջակցի գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի տրամադրման հարցում:

ՀՈԴՎԱԾ 4

ՍույնՀուշագրով նախատեսված համագործակցությանշրջանակներում Նախարարությունը կիրազեկի և Ինստիտուտի հետ կքննարկի՝

- փոխադարձհետաքրքրություններկայացնողմիջոցառումների, այդթվում՝համաբանակային սպորտային և միջպետական ռազմական համագործակցության շրջանակներում կազմակերպվող

- ֆիզիկական պատրաստվածության ծրագրերի մշակման գործընթացումմասնագիտական աջակցության հետ կապված հարցեր:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը կանցկացնեն համատեղ քննարկումներ համագործակցության ընդլայնման, սպորտային նվաճումների արդյունքների հարցերի շուրջ:

ՀՈԴՎԱԾ 6

ԿողմերըպարտավորվումենձեռնարկելբոլորմիջոցներըսույնՀուշագրովարձանագրվածըբարեխղճորենկատարելուհամար՝ ապահովելով իրականացված գործունեության արդյունքում իրենց հայտնի դարձած պետական, ծառայողական, հեղինակային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների չհրապարակումը և չբացահայտումը:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կհանդիսանան սույն Հուշագրի անբաժանելի մասը: Այդ արձանագրություններն կիրառվում են սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 8

8.1. ՍույնՀուշագիրը կիրառվում էԿողմերիստորագրմանօրվանիցևգործումէանորոշ ժամկետով:

8.2. ՍույնՀուշագիրըկարողէվաղաժամկետլուծվելԿողմերիցյուրաքանչյուրինախաձեռնությամբ՝ ենթադրվողդադարեցմանօրվանիցոչուշ, քան 1 (մեկ) ամիսառաջմյուսԿողմինգրավորձանուցմամբ:

8.3. ՍույնհուշագիրըԿողմերիցոչմեկիհամարֆինանսականպարտավորություններչիառաջացնում:

8.4. Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած տարաձայնությունները կլուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

8.5. Սույն Հուշագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն հուշագրի գործողության ընթացքում սկսված ծրագրերի և նախագծերի կատարման ընթացքի վրա, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Ստորագրված է Երևան քաղաքում 2019 թվականի դեկտեմբերի 20-ին, երկու բնօրինակով՝ հայերեն,որոնք հավասարազոր են:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	**Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի ժ/պ**
_____ **Գ. ԲԱԼԱՅԱՆ**	_____ **Դ. ԽԻԹԱՐՅԱՆ**